



Զահրատ

Թաղ

Ես իմ թաղիս քերթողն եմ
Լեզուս աղքատ է թաղեցիներու նման
Տաղերուս միակ հարստութիւնը կը կազմեն
Թաղեցիներու հոգերը

Կը սիրեն թաղիս բնակիչները
Անոնք լիալուսինը չտեսնելու չափ կոյր
Չեփիտին երգը չիմանալու չափ խուլ են
Համր են անոնք
Իրենց ապագային մասին խօսիլ չկարենալու չափ
Իսկ ես աղքատ լեզուովս կրնամ երգել Որփէոսի նման

Որովհետեւ պատկերներս ունին թաղեցիներու երազները
Գոյն գոյն երազները
Լոյս լոյս երազները

Նորածինին նման զոց մի պահէք բարեկամներ ձեր աչքերը

Ամէն թաղ իր երազը ունի
Ամէն մարդ իր երազը ունի
Օր պիտի գայ պիտի տեսնէք
Ամէն ինչ իրական է դարձեր
Աւելի առոյգ պիտի երգեն ոչ միայն քերթողները

Այլ բոլոր մարդիկը միաբերան